

**ՀԲԸՄԻ 50-ԱՄԵԱԿԻՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ
ՇՈՒՇԻ ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԻ ՈՒ ՊԱՐԻ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԵԼՈՅԹԸ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ՝
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՀԱՅԿ ԵՒ ՇԱՔԷ ՄԱՃԱՌԵԱՆՆԵՐՈՒ**

Շաբաթ, 19 Ապրիլ 2008ի երեկոն, Վանիէ Գոլէճի հանդիսասարահը նեղ կու գար ընդունելու այն բազմահարիր հանդիսատեսները, որոնք փութացեր էին սրահ, ողջունելու Նիւ Եորքի, Ս. Վարդան Հայց. Առաքելական Եկեղեցոյ հովանիին տակ աշխուժօրէն գործող ՇՈՒՇԻ պարախումբի ելոյթը, ղեկավարութեամբ երկարամեայ պարուսոյց Տիկ. Սեդա Փասքալեան Գանթարճեանի:

Ելոյթը սկսաւ ՀԲԸՄԻ Մոնթրէալի Վարչութեան Ատենապետ Տիար Արմէն Պշաքճեանի ողջոյնի խօսքով: Առաջին հերթին ան ողջունեց ներկայութիւնը Գանատահայոց Առաջնորդ Գերշ. Տէր Բագրատ Եպս. Գալստանեանի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ հովիւ Արժ. Տէր Վազգէն Քհնյ. Պոյաճեանի եւ երէցկին Նարինէի, ինչպէս նաեւ՝ Ս. Խաչ Եկեղեցոյ Հովիւ Արժ. Տէր Կոմիտաս Քհնյ. Միրզախանեանի եւ երէցկին Լիլիթի ներկայութիւնը սոյն ելոյթին:

Այս առթիւ ան շնորհակալութիւն յայտնեց Տիկ. Փասքալեանին, որ 15ամեայ պարախումբը պատրաստած էր այս յատուկ ելոյթը նուիրուած մասնաճիւղիս 50ամեակին եւ երկրորդ անգամ ըլլալով կ'այցելէր Մոնթրէալ, իր աւելի քան 50 պարման-պարմանուհիներով, ինչպէս նաեւ երաժշտական ղեկավար՝ Անդրանիկ Մուրատեանին: Պրն. Պշաքճեան, նույնպէս փոխանցեց իր շնորհակալիքը օրուան նախագահներ եւ գաղութիս յայտնի ազգայիններ Տէր եւ Տիկ. Հայկ եւ Շաքէ Մաճառեաններուն, որոնք սիրով ընդունած էին նախագահել պարախումբին ելոյթ: Շնորհակալութիւն յայտնուեցաւ նաեւ ծանօթ ազգային Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Ռոզ Տիգրանեաններուն, իրենց ընձեռած նիւթական օժանդակութեան:

Ելոյթը սկսաւ շատ տպաւորիչ ասմունքովը Նունէ Աւետիսեանի, որ ողջունեց ներկաները խլելով ջերմ ծափահարութիւններ: Ապա, «Արագած» Պարի կշռութաւոր եղանակով բեմ բարձրացան խումբին պարողները, որուն յաջորդեց երգիչ Յովիկ Գրիգորեանի կատարումը ՀԲԸՄԻ քայլերգին, ու ներկաները յտնկալաւ ու հպարտութեամբ ունկնդրեցին անոր գեղեցիկ մենակատարումը ու ջերմօրէն գնահատեցին ծափահարութիւններով: «Գարուն Երեւան» երգը, մեկնաբանութեամբ Յովիկ Գրիգորեանի նուիրուած էր Մասնաճիւղի հիմնադրութեան փառապանծ 50-Ամեակին, որուն ընկերակցեցաւ պարախումբը ու բեմին յետամասը բարձրացաւ Միութեան մեծկակ զինանշանը նշուած 50-ամեայ յիշատակութեամբ: Ներկաները յտնկալաւ ու երկար ծափահարութիւններով գնահատեցին այս յիշատակութիւնը:

Պարախումբի ելոյթը ապա շարունակուեցաւ գեղեցիկ պարերու կատարումներով՝ «Ղարաբաղի Զմրուխտ Հաւքեր», «Արցախ», «Թամամ Աշխարհ» եւ «Քամանչա»ի երգերու մեկնաբանութեամբ Յովիկ Գրիգորեանի:

Ներկաները խոր յուզումով ունկնդրեցին «Կիլիկիա» եւ «Որտեղ Գտնեմ քեզ» երգերը Յովիկ Գրիգորեանի, որուն ընկերակցեցաւ երգչուհի Ռիմա Կարապետեան:

Երգիչ Արմէն Յովհաննէսեանի թաւ ձայնը եւ ազգային երգերու յաջող մեկնաբանութիւնները առինքնեցին ներկաները, որուն յաջորդեց երգչուհի Սալբի Մայիլեանի խիստ տպաւորիչ մեկնաբանութիւնը «Հայաստանի Պալիկներ» երգի,

որուն պարրով ընկերակցեցան խումբին փոքրիկները, արժանանալով հանդիսականներուն ջերմ գնահատանքին:

Երեկոյթը այսպէս շարունակուեցաւ ազգային երգերու եւ պարեղանակներու իրերայաջորդ կատարումներով՝ «Յուշարձաններ» եւ «Մարտակերտ» եւ առաջին մասը ամբողջացաւ բոլոր երգիչներուն մեկնաբանութեամբ «Զայն մը հնչեց Էրզրումի Հայոց Լեռներէն», որուն յաջորդեց Սալբի Մայիլեանի սքանչելի մեկնաբանութիւնը «Միասնութեան Ծուրջ Պարը», խորխտ պարովը խումբին պարմանուհիներուն:

Միջնադադարին, որ տեւեց շուրջ 15 րոպէներ, հանդիսատեսները ուրախ էին խումբին ներկայացուցած ճոխ յայտագրով: Երիտասարդուհիներուն հեզաճկուն պարերովն ու հայ պարմանուհիներուն շնորհալի ձեռքերու շաժումներուն շնորհիւ ներկայացուած գեղեցիկ պարերն, միայն հպարտութիւն կ'առթէին հանդիսատեսին եւ կը ձգէին հայկական դրոշմը զայն մեկնաբանողներուն:

Յայտագրին երկրորդ մասը, շարունակուեցաւ նոյնքան զօրեղ մեկնաբանութիւններով՝ «Ծովից Ծով» ասմունք-պատգամովը՝ Լոռի Սեդրակեանի եւ պարախումբին, որ դարձեալ ձօնուած էր Մասնաճիւղի 50ամեակին:

Ապա փոքրիկներու «Զիւորներու» պարը, համաչափ ու ոտքերու արագ շարժումներու կատարողութեամբ, խլեց ներկաներու ջերմ ծափահարութիւնները:

Հայրենի ասմունքող Նունէ Աւետիսեանի երախտագիտական խօսքը հանդէպ ՀԲԸՄի ազգային առաքելութեան եւ ապա ծաղկաքաղը հայրենի բանաստեղծներու գործերուն, յագեցուցին ծարաւը գեղեցիկ ասմունքի մեկնաբանութեանց կարօտ հանդիսատեսներուն, որոնք կարող էին մնալ երկար ժամեր ըմբռնուելու համար անոր սքանչելի մեկնաբանութիւնները:

Ու այսպէս երկրորդ մասը ամբողջացաւ «Երուանդաշատ», «Սարդարապատ», «Գանձասար եւ Պիթիս քաղաք» երգով ու պարով, ու ելոյթը եզրափակուեցաւ «Զարթիր Լաօ» եւ «Արդեօք Ովքեր են» երգերով, որուն ընկերակցեցան բոլոր երգիչ-երգչուհիները, ինչպէս նաեւ պարախումբին բոլոր մասնակցողները, ղեկավարութեամբ Տիկ. Սեդա Փասքալեան-Գանթարճեանի:

Ելոյթի ասարտին, խումբին կատարուեցաւ յատուկ հիւրասիրութիւն:

Ընորհակալութիւն ձեռնարկին հովանաւոր Տէր եւ Տիկ. Մաճատեաններուն:

Ընորհակալութիւն ձեռնարկին նուիրատուներուն:

Վարձքը կատար պարախումբին ու անոր ղեկավարութեան:

Վարձքը կատար սոյն ելոյթը կազմակերպող 50ամեակի մարմնի ատենապետ՝ Տիար Պօղոս Քիշեանին, մարմնի անդամներ՝ Տիկիներ Յասմիկ Խաչիկեանին, Լենա Պէօճէքեանին, Լենա Քիրքճեանին, Սիրան Ծօպուկեանին, Լիւսի Տէտէեանին, Կրէյս Պետրոսեանին եւ Պրն. Յակոբ Մելքոնեանին, ինչպէս նաեւ՝ ՀԲԸՄի Մոնթրէալի վարչութեան:

Ս.Ս.